ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/36

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

Բողոք բերող՝ «Արքասիմ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Արքասիմ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վ. Սիմոնյանի,

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչներ՝ Դ. Մելիքսեթյանի, Կ. Ղևոնդյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամի թիվ 57 հիմնական դպրոցի շենքի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արքասիմ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 04.05.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամի թիվ 57 հիմնական դպրոցի շենքի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Արքասիմ» ՍՊԸ-ի հայտը ճանաչել բավարար և համապատասխան հրավերի պահանջներին և անվավեր ճանաչել «Արտշին-1» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 30.04.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 03.05.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/6772-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է դրանում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 04.05.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

04.05.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/36 համարի ծածկագիրը:

12.05.2021թ.-ին, 21.05.2021թ.-ին և 27.05.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 21.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.05.2021թ.-ին:

2. «Արքասիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արքասիմ» ՍՊԸ-ն 04.05.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«2021 թվականի ապրիլի 5-ին հրապարակվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամի կարիքների համար Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամի թիվ 57 հիմնական դպրոցի շենքի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման հայտարարություն:

2021 թվականի ապրիլի 20-ին նույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրություն է կազմվել և առաջարկվել է ԱՐՔԱՍԻՄ ՍՊԸ ընկերությանը մինչև 2021 թվականի ապրիլի 22-ը ժամը 11-00 ներկայացնել ուղղված ծավալաթերթ նախահաշիվ, որում հայտնաբերվել էին որոշ անընթեռնելի տողեր:

2021 թվականի ապրիլի 22-ին ժամը 10:42-ին հրավերում նշված էլ. փոստին ուղարկվել է շտկված ծավալաթերթ նախահաշիվը, (կից ներկայացված է շտկված ծավալաթերթի ուղղարկման օրը, ժամը, էլ. հասցեի լուսապատճեն), սակայն 2021 ապրիլի 23-ին կազմված արձանագրությունում նշվել է, որ ԱՐՔԱՍԻՄ ՍՊԸ սահմանված ժամկետում չի ներկայացրել շտկված ծավալաթերթ նախահաշիվը, որի հիման վրա ընկերության ներկայացրած հայտը մերժվել է հրավերի պահանջներին չբավարարող: Նույն արձանագրությամբ 3 կազմակերպությունների հրավիրվել է բանակցությունների որոնց գնային առաջարկը կրկնակի, եռակի բարձր է ԱՐՔԱՍԻՄ ՍՊԸ-ի գնային առաջարկից: Բնականաբար ԱՐՔԱՍԻՄ ՍՊԸ բանակցությունների հրավիրված կազմակերպությունների ցանկում չի եղել, զրկվելով նաև բանակցային փուլից:

2021 թվականի ապրիլի 27-ի արձանագրության թիվ-1 որոշմամբ, ընտրված մասնակից է ճանաչվել ԱՐՏՇԻՆ-1 ՍՊԸ, նույն թվականի ապրիլի 28-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարություն:

Ելնելով վերը նշված փաստերից և կից ներկայացված փաստաթղթերի լուսապատճենից, գտնում եմ, որ ԱՐՔԱՍԻՄ ՍՊԸ ընկերության կողմից ներկայացված հայտը պետք է գնահատվեր բավարար, քանի որ սահմանված ժամկետում ընկերեության կողմից ներկայացվել է համապատասխան պահանջվող փաստաթուղթը, ծավալաթերթ նախահաշվի շտկված տարբերակը:»:

Վերոգրյալի հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամի թիվ 57 հիմնական դպրոցի շենքի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Արքասիմ» ՍՊԸ-ի հայտը ճանաչել բավարար և համապատասխան հրավերի պահանջներին և անվավեր ճանաչել «Արտշին-1» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Ընկերությունը 11.05.2021թ.-ի թիվ գրությամբ ներկայացված լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պաասխան ԳԲՔԱ-ԼՕ-2021/36 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ դիրքորոշման հայտնում ենք Ձեզ, որ փաստորեն կողմն ընդունել է բողոքով ներկայացված այն հանգամանքը, որ ԱՐՔԱՍԻՄ ՍՊ ընկերությունը սահմանված ժամկետում կատարել է 20.04.2021 թվականի արձանագրությամբ պահանջված գործողությունները ներկայացրել է ուղղված ծավալաթերթ նախահաշիվը: Միևնույն ժամանակ, կողմը Ձեզ է ներկայացրել մեզ համար անհասկանալի և մինչ այս պահը չհրապարակված արձանագրություն, համաձայն որի Արքասիմ ՍՊԸ-ից պահանջվել է և ժամկետ է տրվել մինչև 23.04.2021 թվականը ներկայացնել հարկային պարտավորությունների մասին տեղեկանք, չնայած այն փաստին, որ կողմը տեղեկացված է եղել հարկային պարտավորություն ունենալու մասին 19.04.2021թ [երկուշաբթի]: Այնուամենայնիվ, հայտնում ենք Ձեզ, որ հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք գոյություն ունի, որը կցում ենք սույն գրությանը, որով միաժամանակ հիմնավորում է, որ 23.04.2021 թվականի դրությամբ, այսինքն կողմի դիրքորոշման մեջ նշված ժամկետում Արքասիմ ՍՊ ընկերության հարկային պարտավորությունների գումարը կազմում է 540 դրամ, որը համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին 2-րդ կետով և հրավերի 1-ին մասի 2.1 կետի 2-րդ ենթակետով թույլատրելի սահմանաչափ է, ուստի տվյալ հիմքով ևս ընկերության հայտը մերժելու հիմքեր չեն եղել:

Այնուամենայնիվ, կցանկանամ ևս մեկ անգամ արձանագրել, որ 19.04.2021 թվականից մինչև 23.04.2021 թվականը որևէ կերպ պահանջ չի ներկայացվել հարկային պարտավորությունների մասով, իսկ հրապարակված որևէ արձանագրություն չկա, որտեղ նշված լինի նման թերության կամ դրա շտկման վերաբերյալ: Իսկ այն, որ կողմը չի ներկայացրել էլ. փոստով ուղարկված նամակի սքրին տարբերակով ապացույց հիմք է տալիս ենթադրել, որ նման բովանդակությամբ ծանուցում էլ. փոստի միջոցով ընկերությանը չի ուղարկվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ կողմը իր դիրքորոշմամբ ընդունում է, որ Արքասիմ ՍՊ ընկերությանը սահմանված ժամկետում շտկել է պահանջված թերությունները խնդրում եմ ներկայացված բողոքը բավարարել:»:

3. <u>«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.05.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6889-2021 գրությամբ դիմել է «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից 04.05.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 07.05.2021թ.-ին թիվ 22/08.1.6-420 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ծանոթացել ենք «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի կողմից ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացրած բողոքին, որի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ս.թ. ապրիլի 20-ին կայացած հայտերի գնահատման նիստին՝ «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ նախահաշվի վերաբերյալ արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, շտկվել է մասնակցի կողմից: Մասնակիցների կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերի գնահատմանը զուգահեռ հարցում էր կատարվել ՀՀ պետական եկամուտների կոնիտե՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված չափը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Հարցմանը ի պատասխան ՀՀ պետական եկամուտների կողմից ստացվել է տեղեկատվություն առ այն, որ «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ, որի չափը կազմում է՝ 2 709 335,0 ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ հայտերի գնահատման նիստը հրավիրվել էր ս.թ. ապրիլի 20-ին ժամը 11:00-ին, իսկ ՀՀ պետական եկամուտների կոնիտեի կողմից տրված տեղեկատվությունը հանձնաժողովին է ներկայացվել տվյալ աշխատանքային օրվա ավարտին, այդ իսկ պատճառով հարկային ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ անհամապատասխանությունը չի արձանագրվել հանձնաժողովի 20.04.2021թ. ժ.11:00 թիվ 4 արձանագրությունում: Հարկային ժամկետանց պարտաորությունների

վերաբերյալ անհամապատասխանությունը արձանագրելու նպատակով հրավիրվել է արտահերթ նիստ, որը կայացել է 22.04.2021թ., համաձայն որի որոշում է կայացվել նիստը կասեցնել ևս մեկ աշխատանքային օրով՝ ծանուցելով «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ին արձանագրված անհամապատասխանության մասին: Սույն թվականի ապրիլի 22-ին ժամը 15:00 armeps համակարգի միջոցով «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ին ուղարկվել է համապատասխան ծանուցումը /համակարգից արտատպված համապատասխան էջերը կցվում են/՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել այն, սակայն մասնակցի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ և ղեկավարվելով ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.1 կետի 2-րդ ենթակետով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով առ այն, որ ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ և հրավերի 1-ին մասի 8.10 կետով, առ այն որ եթե սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկում արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, գնահատող հանձնաժողովը ս.թ. ապրիփ 23-ին ժամը 15:00 կայացած նիստում մերժել է «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը:

Կից ներկայացվում է անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամի թիվ 57 հիմնական դպրոցի շենքի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 05.04.2021թ.-ին հայտարարվել է «ՀՊՄՀ-

ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արքասիմ» ՍՊԸ-ն:

iii. «Արքասիմ» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանն մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Հանձնաժողովի քարտուղար Դ. Մելիքսեթյանը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը, 19.04.2021թ.-ին հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ նաև՝ ՊԵԿ) և խնդրել է տրամադրել «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա՝ 12.04.2021թ.-ի դրությամբ, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկատվություն:

v. ՊԵԿ-ի կողմից 19.04.2021թ.-ին տրված տեղեկատվության համաձայն՝ «Արքասիմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 2 709 335 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 20.04.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում որոշ անվանումներ ընթեռնելի չեն:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 20.04.2021թ.-ին ժամը 11:00-ը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

viii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 21.04.2021թ.-ին Ընկերության simonynna93@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկվել թիվ 4 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցում:

ix. Հանձնաժողովի 22.04.2021թ.-ի արտահերթ նիստի արձանագրության համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության

համաձայն Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 2 709 335 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:

x. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 23.04.2021թ.-ին ժամը 15:00-ը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

xi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 22.04.2021թ.-ին Ընկերության simonynna93@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկվել թիվ 5 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցում:

xii. Հանձնաժողովի 23.04.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունների շտկումներ չեն ներկայացվել, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Ընկերության հայտը մերժել՝ հրավերով սահմանված պահանջները չբավարարելու հիմքով:

xiii. Բողոքներ քննող անձը 18.05.2021թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/11571-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել՝ «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից վերոնշյալ գնման ընթացակարգի շրջանակներում armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով «Արքասիմ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել են ծանուցումներ, թե՝ ոչ և եթե ծանուցումներն ուղարկվել են, ապա Ընկերության կողմից ծանուցումները ստացվել են, թե՝ ոչ:

xiv. Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.05.2021թ.-ի թիվ Ն/26-1/11747-2021 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Արքա Սիմ» ՍՊԸ-ի՝ «Armeps» համակարգում գրանցած simonynna93@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 21.04.2021թ. ժամը 12:41-ին և 22.04.2021թ. ժամը 14:26-ին ուղարկվել են էլեկտրոնային ուղերձ նամակներ: Միաժամանակ հայտնել են նաև, որ 21.04.2021թ. ժամը 12:41-ին

առաքված նամակը ուղեկցվել է վերոգրյալ էլեկտրոնային փոստի հասցեի կողմից չընդունված լինելու մասին «Mail Delivery System» հաղորդագրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից 04.05.2021թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակի հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության

անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով

կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից. հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Նույն ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամի թիվ 57 հիմնական դպրոցի շենքի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 05.04.2021թ.-ին հայտարարված «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ

մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող սարքերի և սարքավորումների նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամի թիվ 57 հիմնական դպրոցի շենքի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ գնահատող հանձնաժողովի քարտուղար Դ. Մելիքսեթյանը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը, 19.04.2021թ.-ին հարցում է ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե և խնդրել է տրամադրել «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա՝ 12.04.2021թ.-ի դրությամբ, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկատվություն, որին ի պատասխան ՊԵԿ-ի կողմից 19.04.2021թ.-ին տրված տեղեկատվության համաձայն՝ «Արքասիմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 2 709 335 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ: Հանձնաժողովի 20.04.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում որոշ անվանումներ ընթեռնելի չեն, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 20.04.2021թ.-ին ժամը 11:00-ը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 21.04.2021թ.-ին Ընկերության simonynna93@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկվել թիվ 4 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցում: Հանձնաժողովի 22.04.2021թ.-ի արտահերթ նիստի արձանագրությամբ արձանագրվել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության համաձայն Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 2 709 335 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 23.04.2021թ.-ին ժամը 15:00-ը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 22.04.2021թ.-ին Ընկերության simonynna93@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկվել թիվ 5 արձանագրությամբ

արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցում: Հանձնաժողովի 23.04.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունների շտկումներ չեն ներկայացվել, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Ընկերության հայտը մերժել՝ հրավերով սահմանված պահանջները չբավարարելու հիմքով: ՀՀ ֆինանսների նախարարության 19.05.2021թ.-ի թիվ Ն/26-1/11747-2021 գրության համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Արքա Սիմ» ՍՊԸ-ի՝ «Armeps» համակարգում գրանցած simonynna93@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 21.04.2021թ. ժամը 12:41-ին և 22.04.2021թ. ժամը 14:26-ին ուղարկվել են էլեկտրոնային ուղերձ նամակներ: Միաժամանակ հայտնել են նաև, որ 21.04.2021թ. ժամը 12:41-ին առաքված նամակը ուղեկցվել է վերոգրյալ էլեկտրոնային փոստի հասցեի կողմից չընդունված լինելու մասին «Mail Delivery System» հաղորդագրությամբ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված **մեկ աշխատանքային օրյա ժամկետում**: Ընդ որում, օրերով հաշվարկվող ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը, իսկ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք 31-րդ և 32-րդ հոդվածներ):

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն

տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուն և Հանձնաժողովը գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս չպետք է վերջիններիս ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը կիրառելով Կարգի 41-րդ և գնման ընթացակարգի հրավերի 8.9-րդ կետերը, այն է՝ ծանուցել է Մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը, այն է՝ 20.04.2021թ.-ին ժամը 11:00-ը և 23.04.2021թ.-ին ժամը 15:00-ը, շտկել արձանագրված անհամապատասխանությունները, գործել է ոչ իրավաչափ, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով և «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամի թիվ 57 հիմնական դպրոցի շենքի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքներ ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված չէ որևէ դրույթ՝ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման համար նախատեսված մեկ աշխատանքային օրյա ժամանակային սահմանափակման մասին, որպիսի պայմաններում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգով և Հրավերով սահմանված և Ընկերությանը ընձեռնված շտկման հնարավորության ժամանակահատվածը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արքասիմ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է և չի բխում Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերով սահմանված պահանջներից, ուստի Ընկերության կողմից ներկայացված բողոքն «Արտշին-1» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու /անվավեր անաչելու/ հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ, ինչպես վերը նշվեց, Պատվիրատուի կողմից, սույն որոշմամբ արված հիմնավորումներով, դեռ պետք է կիրառվի Կարգի 41-րդ կետի դրույթները և ծանուցում ուղարկվի Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար:

Այլ կերպ ասած՝ Ընկերության հայտը բավարար գնահատելու համար նախ անհրաժեշտ է ապահովել Կարգի 41-րդ և հրավերի 8.9-րդ կետերով սահմանված պայմանները, ինչից հետո Կարգի 42-րդ և Հրավերի 8.10-րդ կետերով սահմանված ժամկետի պահպանմամբ՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հետո միայն հնարավոր կլինի գնահատել Ընկերության հայտը և այն համարել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող:

Ուստի Ընկերության կողմից բողոքով ներկայացված «Արքասիմ» ՍՊԸ-ի հայտը հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող ճանաչելու պահանջի մասով, Բողոքներ քննող անձը փաստում է, որ այն անհիմն է և ենթակա է մերժման, վերոնշյալ պատճառաբանություններով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից 04.05.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/36 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամի թիվ 57 հիմնական դպրոցի շենքի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՊՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Արտշին-1» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

3. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**